«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ընտանիքի հոգեբանություն,կոնֆլիկտներ»

Առարկան՝ Հայոց լեզու և Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Գոհար Ստեփանյան Ստեփանի

Ուսումնական հաստատություն՝Կոտայքի մարզի ,քաղաք Եղվարդի Համլետ Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3
1. Ընտանիքի էությունը, կառուցվածքը 4
2. Ընտանեկան կոնֆլիկտների հասկացությունը, պատճառները, դրանց ծագման մեխանիզմը 7
3. Ընտանիքի ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա 11
Եզրակացություն 16
Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

<u>Թեմայի արդիականությունը:</u> Ընտանիքը կազմվում է ամուսնության կամ արյունակցական կապի միջոցով մարդկանց համախմբման հիման վրա:Մարդու կյանքի ոչ մի ոլորտ ազատված չէ կոնֆլիկտային իրավիճակներից:Եվ բացառություն չէ նաև հայ ընտանիքը:Կոնֆլիկտը բախում է,տարաձայնություններ,որի ժամանակ մարդ անհանգստություն է զգում:

Այսօր հայ ընտանիքում ընտանեկան կոնֆլիկտների թեման արդիական է,քանի որ նորաստեղծ կամ հասուն տարիքում ընտանիքում կոնֆլիկտների պատճառով ամուսնալուծություններ են տեղի ունենում:Գոյություն ունեն ընտանեկան այնպիսի կոնֆլիկտներ,որոնց սխալ լուծման դեպքում այն հանգեցնում է ամուսնալուծություններին:

<u>Հետազոտության նպատակը:</u> Հետազոտել ընտանեկան կոնֆլիկտների առանձնահատկությունները:

<u>Հետազոտության օբյեկտը:</u> <u>Ընտանեկան կոնֆլիկտների հոգեբանական առանձնահատկություններն են:</u>

<u>Հետազոտության առարկան</u><u>: Ընտանեկան կնոֆլիկտների առանձնահատկությունները և դրանց կարգավորման հիմնախնդիրներն են:</u>

<u>Հետազոտության խնդիրները.</u>

1. Ուսումնասիրել ընտանիքի էությունը և ֆունկցիաները
2. ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների առանձնահատկությունները:
3. ներկայացնել ընտանեկան կոնֆլիկտների պատճառները
4. վերլուծել ընտանեկան կոնֆլիկտների հոգեբանական առանձնահատկությունները

1. Ընտանիքի էությունը, կառուցվածքը

Ընտանիքը մարդու վերարտադրության սոցիալական համակարգ է, որ պայմանավորված է արյունակցական կապի, ամուսնության կամ մարդկանց միավորող կենցաղային ընդհանրությամբ, փոխադարձ բարոյական պատաս-խանատվությամբ և փոխօգնությամբ, ապրում է մի հարկի տակ և վարում է ընդհանուր տնտեսություն: Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով: Ընտանքիը նաև սոցիալական ինստիտուտ է, այսինքն՝ մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձևը, որի շրջանակներում իրականացվում է մարդկանց առօրյա կյանքի հիմնական մասը, սեռական հարաբերություններ, մանկածնություն և երեխաների սկզբնական սոցիալականացում, կենցաղային խնամքի, կրթական և բժշկական սպասարկման նշանակալի մաս և այլն:

Ցանկացած ընտանիքում տրվում էր բացարձակ ազատություն ընտանիքի ներսում սեռական շփման համար, այսինքն՝ միևնույն դասին պատկանող անդամ-ների միջև (խմբային սոցիոլոգիա): Առանձնացնում են ընտանիքի հատուկ գործա-ռույթներ, այնպիսիք, ինչպիսիք են ամուսնությունը, ծնող լինելը և բարեկամություն[1]: Ազգականներին կապող հարաբերությունների շրջանի մեջ ամենից առաջ առանձնանում է ընտանեկան ազգակցությունը: Բոլոր հասարակություններում մենք կարող ենք առանձնացնել այն, ինչը սոցիոլոգները և մարդաբաններն անվանում են հիմնական ընտանիք,որը բաղկացած է երկու չափահասներից, որոնք ապրում են միասին, վարում են իրենց տնտեսությունը և ունեն կամ չունեն երեխաներ: Ավանդական հասարակությունների մեծ մասում հիմնական ընտանիքները ազգակցական հարաբերությունների ընդլայնված ցանցի մի մասն են:

Առավել տարածված տիպը նուկլեար ընտանքին է (լատ. nucleus կորիզ), որը բաղկացած է ամուսինների մեկ զույգից՝ երեխաներով կամ առանց երեխաների: Նուկլեար ընտանքիը կարող է լինել նաև լրիվ կամ ոչ լրիվ՝ բաղկացած մեկ ծնողից և երեխաներից: Ընտանքիը դառնում է ոչ լրիվ ամուսնալուծության, այրիանալու, միայնակ մայրության հետևանքով: Եթե ընտանքում ամուսնական զույգից և նրանց երեխաներից բացի կան այլ ազգականներ, ապա այն կոչվում է ընդլայնված ընտանիք կամ գերդաստան: Ընտանեկան հարաբերությունների հիմքում ընկած է ընտանիքի պատմական զարգացումը: Այսինքն այն զարգանում

[1] Сысенко В.А. Чувство собственного достоинства и устойчивость брака. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д.Я. Самара: Издательский Дом «Бахрах-М», 2002, էջ 177

է պարզից դեպի բարդ, մայր իշխանությունից դեպի հայր իշխանություն, պոլիգամիայից դեպի մոնոգամիա: Ընտանիքը դասակարգվում է ըստ ֆունկցիաների և ըստ կառուցվածքի:

1. Էնդոգամիա կամ էկզոգամիաէնդոգամիա ամուսնություն միևնույն սոցիալական շերտի միջև, էկզոգամիա՝ հասարակության տարբեր շերտերի միջև ամուսնություն:

2. Պոլիգամիա, մոնոգամիա և հերթափոխվող մոնոգամիա պոլիգամիան դա բազմամուսնությունն է, այսինքն՝ պոլիանդրիա (մեկ կին մի քանի տղամարդ) և պոլիգիմիա (մեկ տղամարդ, մի քանի կին): Մոնոգամիան մենամուսնությունն է՝ մեկ կին, մեկ տղամարդ, հերթափոխվող մոնոգամիան կոնկրետ ժամանակաշրջանում ապրում են մեկի հետ, հետո ամուսնալուծվում և նորից են ամուսնանում:

3. Ավանդական հայրիշխանություն, ավանդական մայրիշխանություն, նեոհայրիշխանություն (նոր), նեոմայրիշխանություն և էգալիտար ընտանիք (հավասար իրավունքներով ընտանիք):

Ավանդական հայրիշխանությունը հին ավանդական ընտանքին է, որտեղ ընտանիքի գլուխը ամենամեծ տղամարդն է: Նեոհայրիշխանության դեպքում տղամարդն իր վրա է կրում բոլոր տնտեսական խնդիրները, մշակում է ընտանիքի հեռանկարային պլանը, իսկ կինը լուծում է կոնկրետ մասնավոր խնդիրներ և ապահովում ընտանիքի բարոյահոգեբանական կայունությունը: Էգալիտարի դեպքում բոլոր իրավունքները հավասար են:

4. Լրիվ ընտանիք, կիսատ և ֆունկցիաների առումով կիսատ ընտանիք: Լրիվ ընտանիքի մոդելն արդեն իսկ պարզ է, իսկ երկրորդ խմբի ֆունկցիաների առումով ընտանիքի տեսակներն են՝ նորմալ, բարենպաստ, անբարենպաստ և այն ընտանիքները, երբ ամուսինները ամուսնական կյանքով բավարարված են կամ որևէ մեկը բավարարված չէ:

Ընտանիքը բաց համակարգ է և այն անընդհատ ենթարկվում է շրջապատին, փոփոխվող ազդեցություններին: Իր ներքին ներդաշնակությունը ապահովելու համար նա պետք է ապահովի 2 կարևոր գործնթացների ներդաշնակությունը՝

- Ասիմիլացիայի, որն ապահովում է ընտանիքի ներքին կայունությունը:
- Ակոմոդացիայի, ապահովում է նորի մուտքը ընտանիք առանց հնին վնասելու:

Ադապտացիայի արդյունքում ապահովում է ադապտացիայի գործընթացը[2]:

Կախված ընտանեկան փոխհարաբերությունների վիճակից և կոնֆլիկտների հաճախականությունից՝ առանձնացնում են ընտանիքի մի քանի տեսակներ/համաձայն Վ. Տորոխտիյի դասակարգման[3]:

Ճգնաժամային ընտանիք, այստեղ հետաքրքրությունների և պահանջմունք-ների հակադրությունները սուր բնույթ ունենք, որոնք ներառում են ընտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտը, այսինքն՝ կոնֆլիկտի համար ազդակ կարող են դառնալ բոլոր վերոհիշյալ պատճառները: Ամուսինները զբաղեցնում են անհանդուրժողական, անհերողամիտ, և նույնիսկ թշնամական դիրք մեկը մյուսի նկատմամբ, չհամաձայնվելով ոչ մի զիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաև այն ընտանիքները, որոնք քայքայվում են, կամ գտնվում են փլուզման եզրին:

Կոնֆլիկտային ընտանիքում ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բախվում են՝ առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ: Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաև զիջումների և կոնֆլիկտների փոխզիջումային լուծումների միջոցով:

Պրոբլեմային ընտանիքին բնորոշ է դժվարությունների տևական գոյությունը, որն ընդունակ է զգալի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Այսպիսի ընտանիքներում հավանական է փոխհարաբերությունների սրացում, ամուսիններից մեկի, կամ երկուսի մոտ էլ հոգեկան խանգարումների դրսևորում:

Նևրոտիկ ընտանիքում հիմնական դերը խաղում է այն գործոնների կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տագնապայնություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորումներ, բարձր ագրեսիվություն և այլն: Ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսևորվել գաղտնի, քողարկված և բաց ակնհայտ ձևերով:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի

[2] Асеев В.Г. Мотивация поведения и формирование личности. М., Мысль, 1976, էջ 38-45

[3] Торохтий, В.С. Психология социальной работы с семьей : монография / В.С. Торохтий, Н.С. Видерман. – Москва : Смысл, 2007, էջ 9

անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարելի է ասել, որ ընտանիքը բաց համակարգ է, որը կազմված է ենթահամակարգերից/ ընտանիքի անդամներ/, և որպես ենթահամակարգ, մտնում է այլ համակարգի՝ հասարակության կազմի մեջ: Ընտանիքի կառուցվածքում առկա են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական բաղադրիչներ: Այն դեպքում, երբ անհատական բաղադրիչները խթանում են ընտանիքի անդամի գործունեությունը, հասարակական բաղադրիչներն ուղղորդում են այն: Արտաքին պայմանների ազդեցությամբ ձևավորվում է ընտանիքի կառուցվածքա-գործառութային մոդելը, որում համատեղվում են անհատական, ընտանեկան և հասարակական կառուցվածքա-գործառութային բաղադրիչները:

Այսպիսով, ըստ կազմի տարբերվում են ընտանիքների մի քանի տեսակներ: Երբեմն ամուսնանալուց հետո երեխաները ծնողների հետ ապրում են նույն ընտանիքում, որտեղ ապրում են նաև պապը և տատը: Սա ընդլայնված ընտանիքն է: Ընդլայնված ընտանիքը կարելի է սահմանել որպես մարդկանց խումբ, որը բաղկացած է երեք կամ ավելի սերունդներից, որոնք ապրում են նույն կամ իրար մոտ տարածքում: Այն կարող է ներառել եղբայրներին, քույրերին, նրանց ամուսիններին և այլն: Ինչպես հիմնական, այնպես էլ ներանձնային բարդ հարաբերություններով ընտանիքները կարող են բաժանվել ծնողական և վերարտադրողական ընտանիքների: Առաջին տեսակին է պատկանում այն ընտանիքը, որտեղ մարդը ծնվում է, երկրորդին՝ այն ընտանիքը, որը մարդը ստեղծում է, և որի ներսում դաստիարակվում է երեխաների նոր սերունդ;

2. Ընտանեկան կոնֆլիկտների հասկացությունը, պատճառները, դրանց ծագման մեխանիզմը

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան

հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի կոնֆլիկտ հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»[4]:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»[5]:

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա.Մ. Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»[6]:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-

---

[4]Տես Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990, էջ 45.

[5] Տես Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002, էջ 212.

[6] Տես Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003, էջ 294.

հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների չորս տեսակ՝

1. Ներանձնային- պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:

2. Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատաի նպատակը, վարքը չի համապատսխանում խմբի նորմերին:

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև: Կոնֆլիկտային գործունեության հիրմքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք)

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը)

գ) նեքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում): Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անընդհատ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով:[7]

Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգի-տակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության

[7] Տես Андреева Т. В. Семейная психология: Учеб. пособие. — СПб.: Речь, 2004. Էջ 37

տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև:

Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեց- նում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ: Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է <<ծանր>> բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակա- կիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

3. Ընտանիքի ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա

Ընտանիքում է դրվում երեխայի զարգացման հիմքը: Ներկայումս ծնող-երեխա փոխհարաբերությունների հիմնախնդիրը կրում է երկակի դրսևորում: Մի կողմից՝ դեռահասության տարիքում ծնողների հետ հուզական շփման պահանջմունքը գնալով ավելի ուժեղանում է. դեռահասը ծնողների հետ հաղորդակցվելու մեծ անհրաժեշտություն է զգում, մյուս կողմից՝ ծնողները հետ են ընկնում իրենց երեխայի զարգացման տեմպերից: Հենց այդ ժամանակ էլ արթնանում է դեռահասի ինքնուրույնության ձգտումը: Դժվար է պատկերացնել ներքին և արտաքին փաստերի այն քանակը, որոնք ազդում են աճող սերնդի վրա և ամեն անգամ փոխում նրա ներաշխարհը: Մեր օրերում շատացել է նյութապես անապահով, ծնողազուրկ ընտանիքների քանակը, որոնք էլ անպայման ազդում են երեխայի զարգացման վրա:

Երեխայի դաստիարակությունը մեր կյանքի կարևոր մասն է կազմում: Ցանկացած ծնող, հենվելով սեփական փորձի և գիտելիքների վրա, փորձում է

չկրկնել ուրիշների սխալները և որքան հնարավոր է ճիշտ դաստիարակել իր երեխաներին: Ընտանիքի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում անհամեմատ մեծ են: Ոչ լիարժեք ընտանիքների երեխաների մոտ հաճախ դիտվում է ինքնուրույնության և շրջապատում ինքնահաստատվելու բարձր ձգտումը:[8]

Հոգեբանները տարբերում են մի քանի տիպի ընտանիքներ: Գոյություն ունեն լիարժեք ընտանիքներ, բայց դեստրուկտիվ, որտեղ չկա համաձայնություն, և տիրում են մշտական վեճեր: Անբարենպաստ ընտանիքն առաջին հերթին այն է, որտեղ գոյություն ունեն դաստիարակության դեֆեկտներ, չնայած սա այս տիպի ընտանիքի միակ բնութագիրը չէ:

Երեխային չեն սիրում, դա հաճախ ցույց են տալիս, և նա այդ դաժան իրականությանը տարբեր ձևով է արձագանքում՝ դառնում է ինքնամփոփ, ընկնում է երազանքների և անուրջների աշխարհը, փորձում է իր վրա ուշադրություն գրավել և այլն:

Մեկ ուրիշ ձևը դաստիարակության՝ գերխնամակալությունն է: Երեխային թույլ չեն տալիս ցուցաբերել նախաձեռնություն, ինքնուրույնություն, վճռականություն: Նման երեխաները դառնում են պասիվ: Որոշ ընտանիքներում երեխաներին դաստիարակում են չոր ու կոպիտ ձևերով, և հետագայում նրանք տառապում են տարբեր հոգեկան հիվանդություններով: Շատ տարածված է հակասող դաստիարակությունը. մի տատիկն ասում է մի բան, մյուսը՝ մեկ ուրիշ, ծնողները, իրենց հերթին, այլ պահանջներ են ներկայացնում երեխային:[9]

Երեխայի համար անբարենպաստ ընտանիքը հակասոցիալական ընտանիքի հոմանիշը չէ: Մի երեխայի համար ընտանիքը կարող է լինել լավ, մյուսի համար՝ անբարենպաստ և կարող է պատճառ դառնալ ծանր հոգեկան ապրումների: Ընտանիքը կարող է լինել լիարժեք, բայց դաստիարակությունը՝ հակասող, ճնշող, խիստ պայմաններով: Երբեմն ոչ լիարժեք ընտանիքն ավելի օգտակար է երեխայի համար, քան լիարժեքը, բայց անբարենպաստ (հայրը հարբեցող է կամ նմանատիպ վիճակներ):

Հանդիպում են արտաքնապես լավ հարաբերություններով ընտանիքներ, սակայն ծնողներն իրենց զբաղվածության պատճառով քիչ ժամանակ են հատկացնում երեխային, ինչն էլ կարող է փոքրիկի փխրուն հոգում վատ հետևանքներ առաջացնել:

---

[8] Տես Зацепин В.И. Брак и семья. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д.Я. Самара. 2002. էջ 63.

[9] Տես Кернберг О.Ф. Отношения любви. Норма и патология. — М., 2006. էջ 250.

Երեխան, հատկապես դեռահասը, ձգտում է բավարարել իր սեփական պահանջմունքները, ինքնուրույն դառնալ, ինքնահաստատվել: Հաճախ սա առաջացնում է երեխայի և ծնողների միջև կոնֆլիկտային իրավիճակ: Աղքատությունը, ագրեսիվությունը, միակողմանի ծնողազրկությունը, որպես օրենք, միաձուլվում են: Այս ամենը պղտորում է աճող սերնդի հոգին. ծեծի ենթարկված երեխաները հաճախ, մեծանալով, դառնում են սադիստներ: Այդ իսկ պատճառով ծնողները պետք է լուրջ և ժամանակին մտածեն զավակի ապագայի մասին, որովհետեւ հետագայում նման երեխաներին ոչ ոք՝ ոչ մի ծնող, ոչ մի ուսուցիչ չի կարող օգնել:

Երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի մասին, առաջին հերթին մեզ հետաքրքրում է այն, թե ինչ ընտանիքից է նա, ինչպիսի դաստիարակություն է ստացել, ովքեր են նրա ծնողները: Եթե նրա վարքը գովասանքի է արժանանում, ապա պարզ է դառնում, որ տվյալ անձը դաստիարակվել է լիարժեք, բարենպաստ ընտանիքում: Բարենպաստ ընտանիքը նպաստում է դրական մթնոլորտի, դրական հետաքրքրությունների, դիրքորոշումների, տրամադրության ու համերաշխության ստեղծմանը: Անբարենպաստն իր մեջ ներառում է շփման, վերաբերմունքի ցուցանիշներ, որոնք դրական ուղղվածություն չունեն կամ ախտահարված են, և այն նպաստում է անձի սխալ կայացմանը: Անբարենպաստ ընտանիքների ծնողների զգալի մասը չի կարողանում կազմակերպել ընտանեկան կյանքը, չգիտի ճիշտ մոտեցումներ երեխաների նկատմամբ. երբ բավարարում են երեխաների բոլոր ընդունելի և ոչ ընդունելի պահանջմունքները, չեն զգում, որ դաստիարակում են եսասեր, եսամոլ, չար, անտարբեր մարդու: Հանդիպում են սառը հոգեբանական մթնոլորտով ընտանիքներ, որտեղ ծնողների սառը հարաբերությունները պայմանավորվում են բազմաթիվ գործոններով. նրանց միջև չկա սեր, հարգանք, արտաքնապես միմյանց նկատմամբ դրսևորում են ջերմ մոտեցումներ, իսկ ներքուստ՝ այլ: Նման մթնոլորտում երեխաներն ավելի զգայունակ են դառնում, զգում են ծնողների անտարբերությունը, որի արդյունքում նրանց մոտ աստիճանաբար առաջանում է սառը վերաբերմունք իրենց իսկ ծնողների նկատմամբ:

Կոնֆլիկտային հարաբերություններով ընտանիքներում նյութական և կրթական անհրաժեշտությունը, նորմերի իմացությունն ի զորու չեն կանխելու պարբերաբար ծագող անախորժությունները: Ծնողները մեկ միմյանց հետ ջերմ են, հոգատար, մեկ էլ անպատվում են իրար, իրարից բաժանվում: Ամուսինների միջև կոնֆլիկտների պատճառը դերաբաշխման մեջ կարող է լինել. հայրը ձգտում է ստանձնել ընտանիքի ղեկավարման դերը, իսկ մայրը պահանջում է փոխհամաձայնեցում, ըմբռնում: Կոնֆլիկտն առաջանում է, երբ ամուսինները

տարակարծիք են դաստիարակման հարցում, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է իր ազդեցության տակ պահել երեխային: Ընտանիքի նման անբարենպաստությունը ներգործում է երեխայի ներհոգեկան զարգացման վաղ օնթոգենեզում:[10]

Հասունացման հետ մեկտեղ, ծնողների ներգործությունների նկատմամբ երեխայի հակազդումները համարժեք բնույթ չեն կրում: Ի վերջո, երեխայի մոտ մշակվում է նեգատիվ վերաբերմունք, ինչն էլ վկայում է նրանց միջև արդեն ստեղծվող պատնեշի մասին: Սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքները բնութագրվում են նյութական ցածր մակարդակով: Այսպիսի ընտանիքներում կարող է բացակայել ծնողներից որևէ մեկը, կամ կրթական մակարդակը շատ ցածր լինել, սակայն դա չի նշանակում, որ նման ընտանիքներում մեծացող երեխաներն ավելի շատ են ընդունակ բացասական ներգործությունների նկատմամբ: Էականն այն է, թե ինչ բնույթ ունի այդ ընտանիքների հոգեբանական մթնոլորտը, որից էլ կախված է երեխայի նորմալ զարգացումը: Ակնհայտ է, որ ընտանիքի անբարենպաստությունն ինքնին սթրեսածին, կոնֆլիկտածին է և առաջացնում է դաստիարակչական բնույթի շատ հիմնախնդիրներ:

Այնպիսի ընտանիքներում, որտեղ տիրում են կոնֆլիկտներ, ծնողների սոցիալ-հոգեբանական թերաճ, հիվանդություններ, վերջինները զրկում են երեխային լիարժեք շփումից: Ծնողների ներկայությունը և դերը երեխայի կյանքի առաջին տարիներին շատ մեծ է: Այն երեխաները, որոնք զրկված են մեկ կամ երկու ծնողից, դանդաղ են զարգանում: Անգամ եթե երեխան ծնողներից մեկին կորցնում է վաղ տարիքում և չի հասցնում գիտակցել այդ կորուստը, դա դժվարություններ է առաջացնում ապագայում: Մայրը բավարարում է երեխայի պահանջները: Այդ պատճառով նրա մահը կամ հեռանալն առաջացնում է ճգնաժամ շրջապատող աշխարհի հանդեպ: Որոշ հոգեբաններ գտնում են, որ հոր բացակայությունն այդքան էլ խորը չի ազդում երեխայի վրա: Սակայն առանց նրա ներկայության, նրա հետ շփման, մոր ազդեցությունը զարգացման գործում ավելի է մեծանում, քանի որ երեխան չի տեսնում վարքի ուրիշ ձև: Նա զրկվում է տղամարդկային վարքի օրինակից, քանի որ հենց հայրն է երեխային տանում դեպի հասարակություն: Իսկ միայնակ մայրը՝ բեռնված տնտեսական խնդիրներով, ժամանակ չի ունենում զբաղվել երեխայով, նրա մոտ կորչում է հետաքրքրությունը, առաջանում է մոր եւ երեխայի օտարացում: Ընտանիքները, որտեղ պահպանվում են զուտ ֆորմալ

[10] Տես Дружинин В. Теоретическая типология моделей семьи. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д.Я. Самара. 2002. էջ 65

ամուսնական հարաբերություններ, նույնպես ազդում են երեխայի վրա և բերում են ներքին ու արտաքին կոնֆլիկտի:[11]

Ընտանիքի նորմալ ֆունկցիոնալ գործունեության մեջ նշանակություն ունի շփման ոճը, որն առաջանում է ամուսինների միջև և կախված է նրանց հետաքրքրություններից, բնավորություններից: Շփման գլխավոր ունակությունն ուրիշի արժեքների ընդունման կարողությունն է:

Ընտանիքում շփման կարիք ունեն նաև երեխաները, ինչը երեխայի անձի ձևավորման գլխավոր գործոնն է: Ընտանիքում երեխաներն առավել շփվում են մոր, քան հոր հետ, քանի որ մայրը նոր սերնդին լույս աշխարհ բերողն է, խնամողը և, այս ամենի հետ մեկտեղ, ունի «հոգևոր» կապ իր սերնդի հետ: Կինն ավելի զգայուն է, էմոցիոնալ, կարեկից, եւ այդ պատճառով երեխան սերտ կապված է մոր հետ: Իսկ հայրն ուժ է, ընտանիքի հենարան: Նա իր ներկայությամբ երեխային վստահություն է հաղորդում, եւ կարճ ժամանակով բացակայությունը երեխայի մոտ առաջացնում է վախ, փակվածություն, ագրեսիվություն: Սակայն պատահում է այնպես, որ ծնող-երեխա փոխհարաբերություններում բացակայում է վստահությունը, որն էլ բացասական կերպով է ազդում երեխայի անձի զարգացման վրա: Ծնող-երեխա փոխհարաբերությունը մի ընթացք է, որի ժամանակ ծնողը կենտրոնանում է երեխայի վրա, սատարում նրան դժվար պահերին, օգնում է խուսափել սխալներից: Սակայն, ամենակարևորը, անհրաժեշտ է երեխային ցույց տալ, որ անհաջողությունը ոչ մի դեպքում չի փոքրացնում նրա անձնային արժանիքները:

[11] Տես Калмыкова Е.С. Психологические проблемы первых лет супружеской пары. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д. Я. -Самара. 2002. էջ 497

Եզրակացություն

1. Ամփոփելով, կարելի է ասել, որ հայ ընտանիքում ընտանեկան կոնֆլիկտների թեման արդիական է,քանի որ նորաստեղծ կամ հասուն տարիքում ընտանիքում կոնֆլիկտների պատճառով ամուսնալուծություններ են տեղի ունենում:Գոյություն ունեն ընտանեկան այնպիսի կոնֆլիկտներ,որոնց սխալ լուծման դեպքում այն հանգեցնում է ամուսնալուծություններին:

2. Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն:Ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ:

3. Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն:Ընտանեկան կոնֆլիկտների պատճառը հիմնականում ամուսինների միջև տարաձայնություններն են, որոնք առաջանում են իրար չհասկանալու պատճառով: Այս ամենի հետևանքը չհասկացվածությունն է,երեխայի դաստիարակության հարցերը,անհանդուրժողականությունը և ընտանեկան կյանքում անբավարարվածությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Андреева Т. В. Семейная психология: Учеб. пособие. — СПб.: Речь, 2004
2. Асеев В.Г. Мотивация поведения и формирование личности. М., Мысль, 1976
3. Дружинин В. Теоретическая типология моделей семьи. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д.Я. Самара. 2002
4. Законы семейной жизни, Уиллард Ф. Харли Пер. Ю. Цыганкова, Протестант, 1992. http://schastie.by/semia/zakony-semejnoj-zhizni-0.html
5. Зацепин В.И. Брак и семья. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д.Я. Самара. 2002.
6. Калмыкова Е.С. Психологические проблемы первых лет супружеской пары. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д. Я. -Самара. 2002
7. Кернберг О.Ф. Отношения любви. Норма и патология. — М., 2006
8. Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990
9. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002
10. Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003
11. Сысенко В.А. Чувство собственного достоинства и устойчивость брака. Психология семьи. Хрестоматия. Под ред. Райгородского Д.Я. Самара: Издательский Дом «Бахрах-М», 2002
12. Торохтий, В.С. Психология социальной работы с семьей : монография / В.С. Торохтий, Н.С. Видерман. – Москва : Смысл, 2007
13. Ստեփանյան Ա. Զ, Ընտանիքը որպես սոցիալ-հոգեբանական համակարգ, Հոգեկան առողջության հայկական հանդես 2013;4(2